Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-1071-12.05.2025-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաշտարարության մասին» 2018 թվականի հունիսի 13-ի ՀՕ-351-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի՝

1) 2.1-ին մասում՝

ա. «երեխայի բնակության վայրի որոշման» բառերից հետո լրացնել «կամ դրա փոփոխման, այդ թվում՝ դատարանի կողմից սահմանված բնակության վայրը փոփոխելու» բառերը.

բ. «ալիմենտի (ապրուստավճարի) բռնագանձման» բառերից հետո լրացնել «կամ դրա փոփոխման, այդ թվում՝ դատարանի կողմից սահմանված ալիմենտի չափը փոփոխելու» բառերը.

գ. «երեխայի հետ շփմանը, դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով ծնողական իրավունքների իրականացման, երեխայի տեսակցության կարգ սահմանելու» բառերից հետո լրացնել «կամ դրանց փոփոխման, այդ թվում՝ դատարանի կողմից սահմանված» բառերը.

2) 3-րդ մասում «լուծմանը» բառից հետո լրացնել «մեկ կամ մի քանի (համահաշտարարություն)» բառերը:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ երկրորդ նախադասությամբ.

«Դիմումի մեջ համապատասխան նշման դեպքում արդարադատության նախարարության կողմից կարող է նշանակվել մշտապես գործող հաշտարարական հաստատություն:».

2) 7.1-ին մասում «հաշտարարի» բառերից հետո լրացնել «կամ մշտապես գործող հաշտարարական հաստատության» բառերը.

3) 7.2-րդ մասում «հաշտարարի» բառից հետո լրացնել «կամ մշտապես գործող հաշտարարական հաստատության» բառերը, «հաշտարարին» բառից հետո լրացնել «կամ մշտապես գործող հաշտարարական հաստատությանը» բառերը, իսկ «նրա» բառը փոխարինել «ընտրված հաշտարարի կամ մշտապես գործող հաշտարարական հաստատության» բառերով:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «բացառությամբ» բառից հետո լրացնել «կողմերի համաձայնությամբ և» բառերը.

2) 3-րդ մասի առաջին նախադասության վերջում լրացնել «՝ բացառությամբ, եթե նշված ժամկետում հնարավոր չի եղել ապահովել սույն օրենքի 11.2-րդ հոդվածով սահմանված կարգով հաշտարարության կողմի պատշաճ ծանուցումը, որի դեպքում արտոնագրված հաշտարարը կողմերի հետ առաջին հանդիպումը նշանակում է կողմի պատշաճ ծանուցումն ապահովելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:» բառերը:

Հոդված 4. Օրենքի 11.1-ին հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ երկրորդ նախադասությամբ.

«Դիմումի մեջ համապատասխան նշման դեպքում արդարադատության նախարարության կողմից կարող է նշանակվել մշտապես գործող հաշտարարական հաստատություն:»:

Հոդված 5. Օրենքի 11.2-րդ հոդվածի 1-ին մասում «կարգով» բառից հետո լրացնել «, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ» բառերը:

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետում «հաշտարարի կրած» բառերը փոխարինել «՝ հաշտարարության իրականացման հետ կապված այլ» բառերով.
2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ նախադասությամբ.

«Մշտապես գործող հաշտարարական հաստատություն ներգրավելու դեպքում հաշտարարի վարձատրության չափը որոշվում է հաստատության կանոններով սահմանված կարգով:».

3) 9-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ հինգերորդ նախադասությամբ.

«Հայտարարագրում ներկայացված տվյալների հավաստիությունը ստուգելու նպատակով արտոնագրված հաշտարարը իրավունք ունի անձից պահանջել համապատասխան ապացույցներ:»:

Հոդված 7. Օրենքի 12.1-ին հոդվածում՝

1) 1-ին մասում «դեպքերում» բառից հետո լրացնել «, ինչպես նաև, եթե պարտադիր հաշտարարության դեպքում կողմերից միայն մեկն է մասնակցում հաշտարարությանը, ապա այդ կողմի համաձայնությամբ» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-6-րդ մասեր.

«4. Ամբողջությամբ կամ մասնակի առցանց հաշտարարություն իրականացնելու դեպքում հաշտության համաձայնությունը կարող է ստորագրվել էլեկտրոնային եղանակով:

5. Ամբողջությամբ կամ մասնակի առցանց հաշտարարություն իրականացնելու դեպքում հաշտության համաձայնություն կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային,

հեռախոսային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով փաստաթղթեր փոխանակելու միջոցով:

6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում հաշտության համաձայնությունը համարվում է կնքված այդ համաձայնությամբ նշված օրը:»:

Հոդված 8. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12.2-րդ հոդվածով.

«Հոդված 12.2. Համահաշտարարությունը

1. Կողմերի փոխադարձ համաձայնության առկայության կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում հաշտարարությունը կարող է իրականացվել մի քանի հաշտարարներ ներգրավելու միջոցով:

2. Համահաշտարարության նկատմամբ կիրառելի են սույն օրենքով նախատեսված կանոններն այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով կամ չի բխում համահաշտարարության էությունից:

3. Հաշտարարների թեկնածության վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում հաշտարարները նշանակվում են արդարադատության նախարարության կողմից, իսկ մշտապես գործող հաշտարարական հաստատություն ներգրավելու դեպքում՝ այդ հաստատության կողմից՝ հաստատության հաշտարարության կանոններին համաձայն:

4. Հաշտարարների վարձատրության չափը որոշվում է կողմերի և հաշտարարի միջև համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ մշտապես գործող հաշտարարական հաստատություն ներգրավելու դեպքում՝ հաստատության կանոններով սահմանված կարգով: Ծախսերը բաշխվում են կողմերի համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում ծախսերը հավասարաչափ բաշխվում են կողմերի միջև, եթե մշտապես գործող հաշտարարական հաստատություն ներգրավելու դեպքում այլ բան նախատեսված չէ մշտապես գործող հաշտարարական հաստատության կանոններին համաձայն:

Հոդված 9. Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) անցել է հանրային ծառայության՝ հանրային ծառայության մեջ գտնվելու ողջ ժամկետով.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-րդ կետ.

«1.1) հանրային ծառայող է՝ հանրային ծառայության մեջ գտնվելու ողջ ժամկետի ընթացքում.»:

Հոդված 11. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հաշտարարները» բառից հետո լրացնել «և մշտապես գործող հաշտարարական հաստատությունները» բառերը.

2) 3-րդ մասում «հաշտարարների» բառից հետո լրացնել «և մշտապես գործող հաշտարարական հաստատությունների» բառերը, իսկ «հաշտարար» բառից հետո լրացնել «կամ մշտապես գործող հաշտարարական հաստատություն».

3) 4-րդ մասում «հաշտարար» բառից հետո լրացնել «կամ մշտապես գործող հաշտարարական հաստատություն» բառերը, իսկ «հաշտարարը» բառից հետո լրացնել «կամ մշտապես գործող հաշտարարական հաստատությունը» բառերը:

Հոդված 12. Օրենքի 21.4-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում «կազմակերպությունը» բառից հետո լրացնել «առանց լիազորագրի» բառերը:

Հոդված 13. Օրենքի 23.1-ին հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ կետով.

«5) մշտապես գործող հաշտարարական հաստատության կողմից ներկայացված հաղորդումը՝ հաշտարարի՝ կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող խախտում կատարելու մասին:»:

Հոդված 14. Օրենքում «հաշտարար» բառերից առաջ լրացնել «արտոնագրված» բառը:

Հոդված 15. Օրենքի 23.5-րդ հոդվածի 2-րդ մասում «նախագահը» բառից առաջ լրացնել «խորհրդի» բառը:

Հոդված 16. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում արդարադատության նախարարությունը համապատասխան ենթաօրենսդրական ակտերը համապատասխանեցնում է սույն օրենքին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաշտարարության մասին» 2018 թվականի հունիսի 13-ի ՀՕ-351-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի՝

1) 2.1-ին մասում՝

ա. «երեխայի բնակության վայրի որոշման» բառերից հետո լրացնել «կամ դրա փոփոխման, այդ թվում՝ դատարանի կողմից սահմանված բնակության վայրը փոփոխելու» բառերը.

բ. «ալիմենտի (ապրուստավճարի) բռնագանձման» բառերից հետո լրացնել «կամ դրա փոփոխման, այդ թվում՝ դատարանի կողմից սահմանված ալիմենտի չափը փոփոխելու» բառերը.

գ. «երեխայի հետ շփմանը, դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով ծնողական իրավունքների իրականացման, երեխայի տեսակցության կարգ սահմանելու» բառերից հետո լրացնել «կամ դրանց փոփոխման, այդ թվում՝ դատարանի կողմից սահմանված» բառերը.

2) 3-րդ մասում «լուծմանը» բառից հետո լրացնել «մեկ կամ մի քանի (համահաշտարարություն)» բառերը:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ երկրորդ նախադասությամբ.

«Դիմումի մեջ համապատասխան նշման դեպքում արդարադատության նախարարության կողմից կարող է նշանակվել մշտապես գործող հաշտարարական հաստատություն:».

2) 7.1-ին մասում «հաշտարարի» բառերից հետո լրացնել «կամ մշտապես գործող հաշտարարական հաստատության» բառերը.

3) 7.2-րդ մասում «հաշտարարի» բառից հետո լրացնել «կամ մշտապես գործող հաշտարարական հաստատության» բառերը, «հաշտարարին» բառից հետո լրացնել «կամ մշտապես գործող հաշտարարական հաստատությանը» բառերը, իսկ «նրա» բառը փոխարինել «ընտրված հաշտարարի կամ մշտապես գործող հաշտարարական հաստատության» բառերով:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «բացառությամբ» բառից հետո լրացնել «կողմերի համաձայնությամբ և» բառերը.

2) 3-րդ մասի առաջին նախադասության վերջում լրացնել «՝ բացառությամբ, եթե նշված ժամկետում հնարավոր չի եղել ապահովել սույն օրենքի 11.2-րդ հոդվածով սահմանված կարգով հաշտարարության կողմի պատշաճ ծանուցումը, որի դեպքում արտոնագրված

հաշտարարը կողմերի հետ առաջին հանդիպումը նշանակում է կողմի պատշաճ ծանուցումն ապահովելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:» բառերը:

Հոդված 4. Օրենքի 11.1-ին հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ երկրորդ նախադասությամբ.

«Դիմումի մեջ համապատասխան նշման դեպքում արդարադատության նախարարության կողմից կարող է նշանակվել մշտապես գործող հաշտարարական հաստատություն:»:

Հոդված 5. Օրենքի 11.2-րդ հոդվածի 1-ին մասում «կարգով» բառից հետո լրացնել «, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ» բառերը:

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածում՝

3) 1-ին մասի 2-րդ կետում «հաշտարարի կրած» բառերը փոխարինել «՝ հաշտարարության իրականացման հետ կապված այլ» բառերով.

4) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ նախադասությամբ.

«Մշտապես գործող հաշտարարական հաստատություն ներգրավելու դեպքում հաշտարարի վարձատրության չափը որոշվում է հաստատության կանոններով սահմանված կարգով:».

3) 9-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ հինգերորդ նախադասությամբ.

«Հայտարարագրում ներկայացված տվյալների հավաստիությունը ստուգելու նպատակով արտոնագրված հաշտարարը իրավունք ունի անձից պահանջել համապատասխան ապացույցներ:»:

Հոդված 7. Օրենքի 12.1-ին հոդվածում՝

1) 1-ին մասում «դեպքերում» բառից հետո լրացնել «, ինչպես նաև, եթե պարտադիր հաշտարարության դեպքում կողմերից միայն մեկն է մասնակցում հաշտարարությանը, ապա այդ կողմի համաձայնությամբ» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-6-րդ մասեր.

«4. Ամբողջությամբ կամ մասնակի առցանց հաշտարարություն իրականացնելու դեպքում հաշտության համաձայնությունը կարող է ստորագրվել էլեկտրոնային եղանակով:

5. Ամբողջությամբ կամ մասնակի առցանց հաշտարարություն իրականացնելու դեպքում հաշտության համաձայնություն կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով փաստաթղթեր փոխանակելու միջոցով:

6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում հաշտության համաձայնությունը համարվում է կնքված այդ համաձայնությամբ նշված օրը:»:

Հոդված 8. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12.2-րդ հոդվածով.

«Հոդված 12.2. Համահաշտարարությունը

5. Կողմերի փոխադարձ համաձայնության առկայության կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում հաշտարարությունը կարող է իրականացվել մի քանի հաշտարարներ ներգրավելու միջոցով:

6. Համահաշտարարության նկատմամբ կիրառելի են սույն օրենքով նախատեսված կանոններն այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով կամ չի բխում համահաշտարարության էությունից:

7. Հաշտարարների թեկնածության վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում հաշտարարները նշանակվում են արդարադատության նախարարության կողմից, իսկ մշտապես գործող հաշտարարական հաստատություն ներգրավելու դեպքում՝ այդ հաստատության կողմից՝ հաստատության հաշտարարության կանոններին համաձայն:

8. Հաշտարարների վարձատրության չափը որոշվում է կողմերի և հաշտարարի միջև համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ մշտապես գործող հաշտարարական հաստատություն ներգրավելու դեպքում՝ հաստատության կանոններով սահմանված կարգով: Ծախսերը բաշխվում են կողմերի համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում ծախսերը հավասարաչափ բաշխվում են կողմերի միջև, եթե մշտապես գործող հաշտարարական հաստատություն ներգրավելու դեպքում այլ բան նախատեսված չէ մշտապես գործող հաշտարարական հաստատության կանոններին համաձայն:

Հոդված 9. Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում՝

3) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) անցել է հանրային ծառայության՝ հանրային ծառայության մեջ գտնվելու ողջ ժամկետով.».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-րդ կետ.

«1.1) հանրային ծառայող է՝ հանրային ծառայության մեջ գտնվելու ողջ ժամկետի ընթացքում.»:

Հոդված 11. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հաշտարարները» բառից հետո լրացնել «և մշտապես գործող հաշտարարական հաստատությունները» բառերը.

2) 3-րդ մասում «հաշտարարների» բառից հետո լրացնել «և մշտապես գործող հաշտարարական հաստատությունների» բառերը, իսկ «հաշտարար» բառից հետո լրացնել «կամ մշտապես գործող հաշտարարական հաստատություն».

3) 4-րդ մասում «հաշտարար» բառից հետո լրացնել «կամ մշտապես գործող հաշտարարական հաստատություն» բառերը, իսկ «հաշտարարը» բառից հետո լրացնել «կամ մշտապես գործող հաշտարարական հաստատությունը» բառերը:

Հոդված 12. Օրենքի 21.4-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում «կազմակերպությունը» բառից հետո լրացնել «առանց լիազորագրի» բառերը:

Հոդված 13. Օրենքի 23.1-ին հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ կետով.

«5) մշտապես գործող հաշտարարական հաստատության կողմից ներկայացված հաղորդումը՝ հաշտարարի՝ կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող խախտում կատարելու մասին:»:

Հոդված 14. Օրենքում «հաշտարար» բառերից առաջ լրացնել «արտոնագրված» բառը:

Հոդված 15. Օրենքի 23.5-րդ հոդվածի 2-րդ մասում «նախագահը» բառից առաջ լրացնել «խորհրդի» բառը:

Հոդված 16. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում արդարադատության նախարարությունը համապատասխան ենթաօրենսդրական ակտերը համապատասխանեցնում է սույն օրենքին:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1071-12.05.2025-ՊԻ-011/0), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-10711-12.05.2025-ՊԻ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	**«Հաշտարարության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«Հաշտարարության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածը լրացնել նոր 1-ին մասով՝ համապատասխանաբար փոփոխելով հաջորդ մասի համարակալումը: «**Հոդված 1.** «Հաշտարարության մասին» 2018 թվականի հունիսի 13-ի ՀՕ-351-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի՝ 1) 2.1-ին մասում՝ ա. «երեխայի բնակության վայրի որոշման» բառերից հետո լրացնել «կամ դրա փոփոխման, այդ թվում՝ դատարանի կողմից սահմանված բնակության վայրը փոփոխելու» բառերը. բ. «ալիմենտի (ապրուստավճարի) բռնագանձման» բառերից հետո լրացնել «կամ դրա փոփոխման, այդ	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			թվում՝ դատարանի կողմից սահմանված ալիմենտի չափը փոփոխելու» բառերը. գ. «երեխայի հետ շփմանը, դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով ծնողական իրավունքների իրականացման, երեխայի տեսակցության կարգ սահմանելու» բառերից հետո լրացնել «կամ դրանց փոփոխման, այդ թվում՝ դատարանի կողմից սահմանված» բառերը.»: Ներկայումս, ի թիվս այլնի, պարտադիր հաշտարարության ենթակա են նաև երեխայի բնակության վայրի որոշման, ալիմենտի բռնագանձման, երեխայի հետ շփմանը, դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով ծնողական իրավունքների իրականացման, երեխայի տեսակցության կարգ սահմանելու վերաբերյալ պահանջները: Միաժամանակ, դատարանները քննում են ոչ միայն նշված պահանջները, այլև նախկինում սահմանված վերոնշյալ կարգերի փոփոխության հետ կապված պահանջները: Այնուամենայնիվ, «Հաշտարարության մասին» օրենքում հստակեցված չէ, թե արդյո՞ք երեխայի բնակության վայրի որոշման,		

			ալիմենտի բռնագանձման, երեխայի հետ շփմանը, դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով ծնողական իրավունքների իրականացման, երեխայի տեսակցության կարգը փոփոխելու հետ կապված հարցերը ենթակա են լինելու պարտադիր հաշտարարության, թե դրանք ենթակա են քննության դատարանների կողմից: Միաժամանակ, անկախ նրանից՝ նշված կարգերը սահմանվում են առաջին անգամ, թե փոփոխվում են նախկինում սահմանվածը՝ բովանդակային առումով դրանք նույնանում են և յուրաքանչյուր դեպքում ուղղված են երեխայի կյանքի տարբեր ոլորտների վերաբերյալ համաձայնությունների կայացմանը կամ որոշումների ընդունմանը: Ուստի, կարծում ենք, որ թե' առաջին անգամ նշված կարգերը սահմանելիս, թե' նախկինում սահմանվածը փոփոխելիս դրանք պետք է նույն կարգավորումներին ենթարկվեն: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է պարտադիր հաշտարարության պահանջ նախատեսել նաև երեխայի բնակության վայրի որոշման, ալիմենտի բռնագանձման, երեխայի հետ շփմանը, դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով		

			ծնողական իրավունքների իրականացման, երեխայի տեսակցության կարգը փոփոխելու համար: Նման կարգավորումը հնարավորություն կտա կողմերին, առանց դատարան դիմելու և ձգձգումների, արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ, փոխադարձ համաձայնությամբ փոփոխել նախկինում սահմանված կարգերը և միայն համաձայնության չգալուց հետո նշված կարգերի փոփոխման պահանջով դիմել դատարան:		
2.	***ՀՀ կառավարություն***	**«Հաշտարարության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված**	«Հաշտարարության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2-րդ մասով. «2) 3-րդ մասի առաջին նախադասության վերջում լրացնել «՝ բացառությամբ, եթե նշված ժամկետում հնարավոր չի եղել ապահովել սույն օրենքի 11.2-րդ հոդվածով սահմանված կարգով հաշտարարության կողմի պատշաճ ծանուցումը, որի դեպքում արտոնագրված հաշտարարը կողմերի հետ առաջին հանդիպումը նշանակում է կողմի պատշաճ ծանուցումն	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			ապահովելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:»: Գործող կարգավորմամբ հաշտարարը պարտավոր է առաջին հանդիպումը նշանակել 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշտարար նշանակվելուց հետո: Միաժամանակ, օրենքի 11.2-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանվում է ծանուցման առանձնահատուկ կարգ, երբ հաշտարարության կողմին ուղարկված պատվիրված նամակի վերաբերյալ երկու շաբաթվա ընթացքում հետադարձ ծանուցում չի ստացվում. այդ դեպքում ծանուցումը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում, և միայն դրա հրապարակումից հինգ օր անց կողմը համարվում է պատշաճ ծանուցված: Արդյունքում՝ գործնականում առաջացել են հակասական մեկնաբանություններ. մի դեպքում հաշտարարները առաջին հանդիպումը նշանակում են մինչև պատշաճ ծանուցումը, երբեմն նույնիսկ միայն մեկ կողմի մասնակցությամբ, մյուս դեպքում՝ հանդիպումը նշանակվում է միայն պատշաճ ծանուցումից հետո, ինչը կարող է դիտվել օրենքով սահմանված ժամկետի խախտում: Առաջարկվող փոփոխության		

			նպատակն է հստակեցնել, որ պարտադիր հաշտարարության դեպքում առաջին հանդիպման նշանակման 10-օրյա ժամկետը հաշվարկվում է ոչ թե հաշտարար նշանակվելու պահից, այլ այն պահից, երբ ապահովված է կողմի պատշաճ ծանուցումը: Սա կապահովի գործընթացի կանխատեսելիությունը, կնվազեցնի չարաշահումների ռիսկը և կհստակեցնի գործող նորմերի կիրառությունը:		
3.	***ՀՀ կառավարություն***	**«Հաշտարարության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված**	«Հաշտարարության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մասով. «3) Հայտարարագրում ներկայացված տվյալների հավաստիությունը ստուգելու նպատակով արտոնագրված հաշտարարը իրավունք ունի անձից պահանջել համապատասխան ապացույցներ:»: Գործող կարգավորումների համաձայն՝ անվճարունակության հաստատման նպատակով անձը արտոնագրված հաշտարարին ներկայացնում է անվճարունակության պահանջներին համապատասխանության վերաբերյալ գրավոր հայտարարագիր: Միևնույն ժամանակ, արտոնագրված հաշտարարները իրավասու չեն անձից	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			պահանջել հայտարարագրում նշված տվյալների հավաստիությունը վկայող փաստաթղթեր, ինչը կարող է առաջացնել գործնական դժվարություններ, ինչպես նաև հանգեցնել հնարավոր չարաշահումների: Նման ռիսկերը նվազեցնելու և գործընթացի թափանցիկությունն ապահովելու նպատակով նպատակահարմար է օրենսդրորեն հաշտարարներին ընձեռել հնարավորություն՝ պահանջելու և ստանալու համապատասխան ապացույցներ հայտարարագրում ներկայացված տվյալների հավաստիության ստուգման համար:		
4.	***ՀՀ կառավարություն***	**«Հաշտարարության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	«Հաշտարարության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1-ին մասով. «Օրենքի 12.1-ին հոդվածի 1-ին մասում «դեպքերում» բառից հետո լրացնել «, ինչպես նաև, եթե պարտադիր հաշտարարության դեպքում կողմերից միայն մեկն է մասնակցում հաշտարարությանը, ապա այդ կողմի համաձայնությամբ» բառերը»: Գործող կարգավորման համաձայն՝ կողմերի փոխադարձ համաձայնության առկայության	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			դեպքում կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում հաշտարարությունը կարող է իրականացվել առցանց եղանակով՝ տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, այդ թվում՝ տեղեկատվական և հեռահաղորդակցային տարբեր հասանելի տեխնոլոգիաների զուգակցմամբ: Գործնականում, սակայն, հանդիպում են իրավիճակներ, երբ նախաձեռնող կողմը մասնակցում է հաշտարարությանը, մինչդեռ մյուս կողմը՝ լինելով պատշաճ կերպով ծանուցված, հրաժարվում է մասնակցությունից, կամ, անկախ հաշտարարի գործադրած ջանքերից, հնարավոր չի լինում ապահովել այդ կողմի պատշաճ ծանուցումը: Նման պարագայում գործող օրենքի դրույթները կարող են մեկնաբանվել այն կերպ, որ առցանց հաշտարարության իրականացումն ապահովվում է բացառապես կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ այն դեպքերում, երբ կողմերից մեկը չի մասնակցում գործընթացին, որևէ հստակ կարգավորում սահմանված չէ: Առաջարկվող փոփոխության միջոցով հստակեցվում է, որ եթե կողմերից մեկը հրաժարվում է մասնակցել		

			հաշտարարությանը կամ անհնար է ապահովել նրա ներկայությունը, ապա հաշտարարը իրավասու է իրականացնել հաշտարարությունը առցանց եղանակով՝ մասնակցող կողմի և իր նախաձեռնությամբ:		
5.	***ՀՀ կառավարություն***	**«Հաշտարարության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 15-րդ հոդված**	«Հաշտարարության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը լրացնել նոր հոդվածով՝ համապատասխանաբար փոփոխելով հաջորդ մասի համարակալումը: «Հոդված 15. Օրենքի 23.5-րդ հոդվածի 2-րդ մասի մասում «նախագահը» բառից առաջ լրացնել «խորհրդի» բառերը:»: Գործող կարգավորման պարագայում կարգապահական գործը հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության խորհրդի քննարկմանը ներկայացվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, կանոնադրությամբ սահմանված կարգով հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության նախագահը նշանակում է կարգապահական գործը զեկուցող խորհրդի անդամին: Հաշվի առնելով, որ Հաշտարարների ինքնակարգավորվող	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			կազմակերպության խորհուրդը հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության գործադիր, ինչպես նաև կարգապահական վարույթ իրականացնող մարմինն է, իսկ նախագահն իրականացնում է ընթացիկ համակարգումը, այս դեպքում տրամաբանական չէ, թե ինչու է նախագահը նշանակում է կարգապահական գործը զեկուցող խորհրդի անդամին: Ամենայն հավանականությամբ, օրենսդրի նպատակն է եղել այդ գործառույթը վերապահել կազմակերպության խորհրդի նախագահին: Նշված փոփոխությունը հնարավորություն կտա հստակեցնել, արդյո՞ք այդ գործառույթը կատարում է նախագահը թե խորհրդի նախագահը:		
6.	***ՀՀ կառավարություն***	**«Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը լրացնել նոր հոդվածով**	«Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ հոդվածով՝ համապատասխանաբար փոփոխելով հաջորդ հոդվածների համարակալումը: «**Հոդված 2.** Օրենսգրքի 137-րդ հոդվածում՝	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			1) 2-րդ մասում «հոդվածով» բառից հետո լրացնել «կամ սույն օրենսգրքի 137.1-ին հոդվածով» բառերով. 2) 7.1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ նախադասությունով. «Մինչև դատարան դիմելը օրենքով պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ նախատեսված լինելու դեպքում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենսգրքի 137.1-ին հոդվածով:». 3) 8-րդ մասում «արտադատական կարգ,» բառերից հետո լրացնել «բացառությամբ մինչև դատարան դիմելը օրենքով պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ նախատեսված լինելու դեպքի» բառերը:»: Հաշվի առնելով, որ պարտադիր հաշտարարության պահանջն ուժի մեջ մտնելու արդյունքում կողմերը որոշակի ժամանակահատվածում չեն ունենալու դատարան դիմելու հնարավորություն՝ դրա դատավարական հետևանքներով, այդ թվում՝ հայցի ապահովում կիրառելու իրավունքի սահմանափակմամբ, հնարավոր ռիսկերից խուսափելու և կողմերի գույքային և անձնական ոչ գույքային		

			իրավունքների պաշտպանության, ինչպես նաև երեխայի լավագույն շահի ապահովման նպատակներով առաջարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում սահմանել պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ նախատեսված լինելու դեպքում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման առանձնահատկություններ:		
7.	***ՀՀ կառավարություն***	**«Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը լրացնել նոր հոդվածով**	«Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ հոդվածով՝ համապատասխանաբար փոփոխելով հաջորդ հոդվածների համարակալումը: «**Հոդված 3.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 137.1-ին հոդվածով. «**Հոդված 137.1. Հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ նախատեսված լինելու դեպքում** 1. Մինչև դատարան դիմելն օրենքով պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ նախատեսված լինելու դեպքում հայցի նախնական ապահովման միջոցների	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			կիրառումն իրականացվում է սույն գլխով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները: 2. Սույն հոդվածով նախատեսված դեպքում դիմողը հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելիս հարուցվելիք հայցի հայցագնի, իսկ ոչ դրամական պահանջների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի առնվազն 500-ապատիկի չափով պարտապանի հնարավոր վնասների հատուցումն ապահովող գումարը դատարանի դեպոզիտ վճարելու փաստը հավաստող փաստաթուղթ չի ներկայացնում: 3. Սույն հոդվածով նախատեսված դեպքում դիմողը պարտավոր է հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին դատարանի որոշումն ստանալու օրվանից երեք օրացուցային օրվա ընթացքում սկսել հաշտարարության գործընթաց և նշված ժամկետն ավարտվելուց հետո երեք օրվա ընթացքում դատարանին ներկայացնել հաշտարարության գործընթաց սկսելու փաստը հաստատող ապացույցներ: 4. Դատարանն իր նախաձեռնությամբ եռօրյա ժամկետում վերացնում է հայցի		

			նախնական ապահովման միջոցները, երբ՝ 1) դիմողը սահմանված ժամկետում չի ներկայացնում հաշտարարության գործընթաց սկսելու փաստը հաստատող ապացույցներ, 2) դիմողը հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին որոշումը ստանալու պահից տասնօրյա ժամկետում չի ներկայացնում հաշտարարությունն ավարտելու մասին ապացույց, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի: 5. Դատարանը շահագրգիռ անձի դիմումի հիման վրա եռօրյա ժամկետում վերացնում է հայցի նախնական ապահովման միջոցները, երբ՝ 1) առկա է սույն օրենսգրքի 137-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքը, 2) առանց հաշտության համաձայնության կնքման հաշտարարությունն ավարտվելուց հետո մեկշաբաթյա ժամկետում դիմողը սույն օրենսգրքով սահմանված կարգով չի ներկայացնում հայցադիմում ընդդեմ պարտապանի՝ դիմումում նշված պահանջով. 3) ներկայացվել է հաշտարարությունը հաշտության համաձայնության		

			կնքմամբ ավարտելու մասին ապացույց: 6. Դատարանը կարող է դիմողի միջնորդությամբ մինչև մեկ ամիս ժամկետով երկարաձգել սույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված տասնօրյա ժամկետը ոչ ավել, քան մեկ անգամ, եթե հաշտարարությունը չի ավարտվել դիմողի կամքից անկախ հանգամանքներում և առկա է հաշտարարությունը դիմողի կամքից անկախ հանգամանքներում ավարտված չլինելու վերաբերյալ հաշտարարի գրավոր դիրքորոշումը:» Հաշվի առնելով, որ պարտադիր հաշտարարության պահանջն ուժի մեջ մտնելու արդյունքում կողմերը որոշակի ժամանակահատվածում չեն ունենալու դատարան դիմելու հնարավորություն՝ դրա դատավարական հետևանքներով, այդ թվում՝ հայցի ապահովում կիրառելու իրավունքի սահմանափակմամբ, հնարավոր ռիսկերից խուսափելու և կողմերի գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների պաշտպանության, ինչպես նաև երեխայի լավագույն շահի ապահովման նպատակներով առաջարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում սահմանել պարտադիր		

			հաշտարարության իրականացման պահանջ նախատեսված լինելու դեպքում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման առանձնահատկություններ: Մասնավորապես, պարտադիր հաշտարարության առանձնահատկություններով պայմանավորված՝ առաջարկում ենք՝ 1. նախատեսել, որ պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ նախատեսված լինելու դեպքում հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ կանոնները գործում են, եթե հատուկ նորմ առկա չէ, 2. հաշվի առնելով, որ դատարան դիմելու իրավունքի նախապայմանը, այն է՝ պարտադիր հաշտարարության պահանջը նախատեսվել է օրենքով և միաժամանակ հաշվի առնելով պարտադիր հաշտարարության ենթակա վեճերի բնույթը՝ այս դեպքում սահմանել դատարանի դեպոզիտ գումար վճարելու պարտավորությունից արտոնություն, 3. հաշվի առնելով, որ այս վեճերից շատերն անմիջականորեն վերաբերում են երեխայի լավագույն շահին՝ նախատեսել առավել սեղմ ժամկետներ, մասնավորապես՝ դիմողը պարտավոր է որոշումը ստանալու օրվանից երեք օրացուցային օրվա		

			ընթացքում սկսել հաշտարարության գործընթաց և երեք օրվա ընթացքում այդ մասին հայտնել դատարանին, 4. սահմանել դատարանի՝ սեփական նախաձեռնությամբ նախնական ապահովման միջոցները վերացնելու հնարավորություն, եթե դիմողը չի ներկայացնում հաշտարարության գործընթաց սկսելու փաստը հաստատող ապացույցներ կամ որոշումը ստանալու պահից տասնօրյա ժամկետում չի ներկայացնում հաշտարարությունն ավարտելու մասին ապացույց: Միաժամանակ, հաշվի առնելով, որ տասնօրյա ժամկետում դիմողի կամքից անկախ հանգամանքներում կարող է հնարավոր չլինել հաշտարարությունն ավարտել, այդ թվում՝ օրինակ՝ ծանուցումների պատճառով՝ առաջարկվում է սահմանել նշված տասնօրյա ժամկետը մեկ անգամ մինչև մեկ ամիս ժամկետով երկարաձգելու հնարավորություն, 5. նախատեսել շահագրգիռ անձանց միջնորդությամբ նախնական ապահովման միջոցները վերացնելու հնարավորություն այն դեպքում, երբ պահանջը կատարվել է պարտապանի կողմից և դրա վերաբերյալ առկա են գրավոր ապացույցներ, հաշտարարությունն ավարտվելուց հետո մեկշաբաթյա ժամկետում հայց		

			չի ներկայացվել դատարան կամ եթե կնքվել է հաշտության համաձայնություն:		
8.	***ՀՀ կառավարություն***	**«Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը լրացնել նոր հոդվածով**	«Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ հոդվածով՝ համապատասխանաբար փոփոխելով հաջորդ հոդվածների համարակալումը: «**Հոդված 4.** Օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասում «որի կապակցությամբ կիրառվել է նախնական ապահովման միջոց» բառերից հետո լրացնել «, բացառությամբ պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ նախատեսված լինելու դեպքում հաշտության համաձայնության կնքման դեպքերի» բառերը:»: Հաշվի առնելով, որ պարտադիր հաշտարարության իրականացման պահանջը նախատեսված է օրենքով և պետությունը խրախուսում է հաշտարարության միջոցով վեճերի լուծումը՝ առաջարկվում է սահմանել, որ նախնական ապահովման միջոցների կիրառման արդյունքում	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			պատճառված վնասների հատուցում անձը չի կարող պահանջել, եթե թեև հայցադիմում չի ներկայացվել պարտապանի դեմ, սակայն այն պատճառով, որ կնքվել է հաշտության համաձայնություն:		
9.	***ՀՀ կառավարություն***	**«Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ բ) կետով**	Հաշտարարության հետ կապված խնդիրների հավաքագրման փուլում բացահայտվել է ևս մեկ պրակտիկ խնդիր, որը կարող է լուծվել օրենսդրական փոփոխության արդյունքում: Այսպես, Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված է, որ արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վարույթներն ընդդատյա են դիմողի բնակության վայրի դատարանին: Այնուամենայնիվ, այդ կարգավորումը չի կարող գործել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը իրավաբանական անձ է: Նշվածով պայմանավորված առաջարկում ենք սահմանել բնակության կամ գտնվելու վայրի դատարան դիմելու կանոն: Այսպիսով, առաջարկվում է՝ «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			հետևյալ բովանդակությամբ բ) կետով՝ համապատասխանաբար փոփոխելով մասերի համարակալումը: «**Հոդված 8.** Օրենսգրքի 288-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասում՝ ա. «վեց ամսվա» բառերը փոխարինել «մեկ տարվա» բառերով. բ. «դիմելու իր բնակության» բառերից հետո լրացնել «(գտնվելու)» բառը.»:		
10.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծերի փաթեթը լրացնել «Ընտանեկան օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով**	Նախագծերի փաթեթը լրացնել հարակից օրենքում լրացումներ նախատեսող նոր օրենքի նախագծով՝ հետևյալ բովանդակությամբ. **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը** **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** **Հոդված 1.** 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասի «ընտանեկան դրությունը» բառերից հետո լրացնել «և հաշտարարությունն ավարտվել է առանց վեճը հաշտությամբ լուծելու վերաբերյալ համաձայնության» բառերը. 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մասով. «3. Եթե կողմերը հաշտարարության արդյունքում կնքել են հաշտության համաձայնություն, որով սահմանել են դատարանի կողմից սահմանված ալիմենտի չափից տարբերվող այլ չափ, վճարման կարգ կամ եղանակ, ապա կատարման ենթակա է հաշտության համաձայնությամբ սահմանված ալիմենտի չափը, վճարման կարգը կամ եղանակը, եթե այն հաստատել է դատարանը կամ նոտարը:»: **Հոդված 2. Եզրափակիչ մաս** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:»:		

			Հաշվի առնելով, որ առաջարկվել է սահմանել, որ պարտադիր հաշտարարության ենթակա են նաև դատարանի կողմից սահմանված ալիմենտի փոփոխման հետ կապված պահանջները, իսկ ՀՀ ընտանեկան օրենսգրքում նախատեսվում է դատարանի՝ ալիմենտի փոփոխման լիազորությունն առանց որևէ բացառության՝ ուստի առաջարկվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդվածում նախատեսել, որ դատարանը քննարկում է ալիմենտի փոփոխման պահանջը, եթե հաշտարարությունն ավարտվել է առանց վեճը հաշտությամբ լուծելու վերաբերյալ համաձայնության: Միաժամանակ, առաջարկում ենք սահմանել, որ հաշտության համաձայնությամբ ալիմենտի այլ չափ, վճարման կարգ կամ եղանակ նախատեսելու դեպքում կատարման ենթակա է հաշտության համաձայնությամբ սահմանվածը, եթե այն հաստատել է դատարանը կամ նոտարը:		